ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի մարտի 7-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ»**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի մարտի 6-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2019 թվականի մարտի 7-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: Ինչով է պայմանավորված և որքանով է հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը պահանջն, որ երկու նշված չափաբաժիններով պահանջվող թվային պռոյեկտորներն ունենան երկուական լիովին բարոյապես հնացած անալոգային VGA (փոխանցում է միայն վիդեո ազդանշան) մուտքեր, այն պարագայում, երբ՝

ա) երկու նշված չափաբաժինների բնութագրերում արդեն իսկ հստակ ամրագրված է պահանջ, որ պռոյեկտորները պետք է ունենան երկուական ժամանակակից HDMI (միաժամանակյա video և audio ազդանշանների փոխանցում) մուտքեր:

բ) արդեն իսկ առնվազն 2-3 տարի է, ինչ շուկայում առկա գրեթե 100% համակարգիչներում (թե դյուրակիր, թե ստացիոնար ՀԿ-ում) լիովին բացակայում են VGA մուտքերը:

գ) Պատվիրատուն խնդիր չի դնում մեկ պռոյեկտորով արտացոլել երկու տարբեր պատկեր («պատկերը պատկերի մեջ», «պատկերը պատկերի կողքին» ֆունկցիոնալ հնարավորություններ), որի դեպքում անհրաժեշտ է ունենալ երկու տարբեր տիպի մուտքային տերմինալներ (օրինակ՝ HDMI և VGA, բայց ոչ թե երկու հատ նույն տիպի VGA մուտք):

Արդյոք պատրաստ է Պատվիրատուն ձեռք բերել ժամանակակից թվային պռոյեկտորներ ավելի բարձր բնութագրերով, ընդլայնված ֆունկցիոնալ հնարավորություններով և մի քանի անգամ ավելի երկար երաշխիքային սպասարկման ժամկետով, քան ամրագրված է հրավերի Հավելված N 1-ում, բայց մեկ VGA մուտքով:

Պարզաբանում N 1: Ի պատասխան ստացված հարցման պարզաբանում ենք հետևյալը.

ա) 1-ին և 2-րդ չափաբաժինների պռոյեկտորների բնութագրերում երկու հատ անալոգային VGA մուտքերի անհրաժեշտությունը օբյեկտիվորեն պայմանավորված է ներկայումս Համալսարանի և համալսարանական հիվանդանոցների լսարաններում մոնտաժված և մինչ օրս շահագործվող VGA-VGA տեսակի հաղորդիչ մալուխների առկայությամբ:

բ) Ներկայումս լսարաններում շահագործվող համակարգիչների գերակշռող մասի մոտ բացակայում է HDMI տեսակի ազդանշանի ելքի հնարավորություն:

գ) «պատկերը պատկերի մեջ», «պատկերը պատկերի կողքին» ֆունկցիոնալ հնարավորությունների խնդիր դրված չէ, քանի որ փոխարենը հաճախ անհրաժեշտ է լինում մեկ պռոյեկտորին միաժամանակ միացնել երկու դյուրակիր համակարգիչ (VGA ելքով):

Ելնելով վերոգրյալից պարզաբանում ենք. պատրաստ ենք ձեռք բերել ժամանակակից թվային պռոյեկտորներ պահանջված տեխնիկական բնութագրերը գերազանցող բնութագրերով՝ պահպանելով հրավերի տեխնիկական բնութագրերի նվազագույն պահանջները, այն է երկու VGA մուտքերով:

Հարցադրում N 2: Ինչով է պայմանավորված և որքանով օբյեկտիվորեն է հիմնավորված, որ այն պարագայում, երբ նույնիսկ էժանագին չինական և թայվանական արտադրողներն առնվազն երկու տարվա երաշխիք են տալիս թվային պռոյեկտորների համար, Պատվիրատուն պահանջել է ընդամենը մեկ տարվա երաշխիք:

Պարզաբանում N 2: Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների նվազագույն երաշխիքային ժամկետը 1 տարի է, ինչը և պահանջվել է, ավել երաշխիքային ժամկետը միայն խրախուսելի է:

Հարցադրում N 3: Նշված չէ 1-ին չափաբաժնով պահանջվող պռոյեկտորի ներկառուցված 16W-ոց բարձրախոսների քանակը: Քանի բարձրախոս պիտի ունենա պռոյեկտորը:

Պարզաբանում N 3: Պռոյեկտորը կարող է ունենալ մեկ կամ երկու ներկառուցված բարձրախոս 16W հզորությամբ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տատյանա Միրզոյանին:

Հեռախոս՝ 060 651 471

Էլ. փոստ՝ procurement.ysmu2@gmail.com

«ԳՀԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

Նախագահ՝ _____ Ա.Արշակյան

Անդամներ՝ _____ Գ.Վարդանյան

_____ Ռ.Գալստյան

_____ Վ.Մարգարյան

_____ Ա.Ահարոնյան